

Այս աւանդութեան պատճառով պատկերին զըտնուած տեղը կը կոչուի Երաշխաւոր Ս. Ասուռաձածնի սեղան, որ Հայոց Վերնատան մէջ կը գտնուի (անդ. էջ 210-211):

2. — Ս. Յարութեան դրան մարմարէ քանդակը որ կը ներկայացնէ Յիսուսի յարթական մուսքը յերուսաղեմ. — Դամասկոսի դրան մօտ արար տունէ մը բերուած և հիմէ մը հանուած է խիստ նշանաւոր քանդակ մը: Քանդակին մէկ կողմը ցոյց կուտայ Միջին դարու հագուստի ձև մը, որով կը հասկցուի քանդակին թուականին սահմանը, որ է Արաքսկիրներու ժամանակը. գտտելով գործին երեւոյթներէն, կը հասկցուի անոր իրական թուականը: Ան կը թուի թէ Բիւզանդական արուեստագէտի մը գործն է, թերեւ լատին թաղաւորներու համար շինուած: Սոյն քանդակը կը ներկայացնէ Ծաղկազարդի օրը Յիսուսի յաղթական մուտքը: Յիսուս հագած է երկար վերարկու մը, լայն թեղանիքներով, դասական ձևեր եւ կարուածքի ծալքով, ոչ թէ կողմնակի, այլ հեծեալի ձևով Յիսուս նստած է իշուան վրայ, որ կը քալէ ուղիղ և կը տեսնուի կողմնակի: Դժբախտաբար իշուան գըլուխը կտրած էր, հաւանաբար խլամներու կողմէն, նմանապէս ոտքերը: Յիսուս ձախ ձեռքով բռնած էր

---

րան տակ Մարիամ Եգիպտացիի անունով, Յունաց ձեռքը կը զսնուի փոք մասուռ մը, որուն մէջ կը զսնուին ննուոյն քանի մը պատկերներ՝ որ կը ներկայացնեն Մարիամ Եգիպտացոյն կեանքը. անոցմէ մին ցոյց կուտայ այն առիւծը, որ հողը փորելով գերեզման մը կը պատահուէ Մարիամ Եգիպտացիին՝ որ վախճանած է նգնարանին մէջ (Տե՛ս 1. Վ. Ս. հաս. ԺԳ. էջ 260, Hanauer, էջ 75, Վարբ Հարանց, հաս. Ա. էջ 292):